վրայ. բայց թէ տոկունին այդ վիճակը իրենց հաճելի երեւի, եթէ սթափելէն կը խորշին, իրենց՝ ինծի ազդած տոկում մը և զզուանքը բացատրելու խօսք մը չեմ կրնար գտնել.

Սակայն ինչ կ՚ընեն. միայնութեան կը կշեն զգայարանքները. կ՚ուզեն որ կեանքը գտնեն այն տեղ՝ ուր աչաց տեսութիւնը կը գտնի, նման այն տղայոց՝ որ արեւգակը հորիզոնէն վար իջած տեսնելով՝ զանիկայ յաւիտենա մեռած կարծեն. Բայց ինչ. միթէ լուծանելի գործարանաց ուխուր տեսարանէն զարթնուող միայն իրե՞նք են. Մինթէ գերեզմանի լռութիւնը լոկ իրե՞նք եղան առաջին. Վեց հազար տարի կայ որ մարդիկ կ՚անցնին մարդուս աչքէն իբրեւ ստուեր. և սակայն մարդկային սեռը զգայարանաց պատրանքներու դէմ ամենակարող օրէնքով և անտեսանելի զգացմամբ մը պաշտպանուած մահուան մէջ ուրիշ բան չը տեսաւ, բայց եթէ գոյութեան փոփոխութիւն մը և տակաւին հանճարներով վերծեալ քանի մը մտքերու ընդդիմութեան հակառակ՝ պահեց միշտ անմահութեան վսեմ աւանդը՝ իբրեւ ընդհանուր բանականութեան վարդապետութի. Արդ այն մերժողները՝ թող զատուին մարդկային ընկերութենէն՝ եւ երթան մեկուսի ձորակ մը տալ որդանց սիրտ մը, որ արդարութեան և ճշմարտութեան սիրով կը տրոփէ. եւ միտք մը, որ զԱստուած կը ճանաչէ,

(Լամընէ)
Թարգ. ի Գաղղ.
Սանասար Սարգ. Յ.
Սանասարեան.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

## ՄԵԾԱՊԱՏԻՒ ԺՈՂՈՎ

(Շարունակութիւն ՚ տես թիւ (5).

Եթէ առանձին հանգամանքները շատ ընտանիքներու և առ հասարակ այսօրուան ընտանեկան յարաբերութիւնները անհամար դէպքերում հարկաւոր են կացուցանում աղջկերանց վարժարանների և թոշակարաների (Densionate) անայժմ զարգացման տեղ փոխարինելը, այնու ամենայնիւ նոյն չափ էլ շատ անգամ հանգստութեան և անփութութեան գործ է, յարաբերելով դէպի այն, ինչ որ սովորութիւն է դառել. որով ծնողաց ընտական պարտաւորութեան զգացմունքը կորչում է. Յետոյ հեշտութեամբ ծնողները՝ զարգացումը այն բաների կարգն են դասում, որոնց մասին հոգացողութիւն անելը՝ իրանց կը խընայեն եղած վարժատունները. և այսպէս կարծում են թէ շատ բան են արել, երբ փող են տուել. Զարմանալի է, թէ ինչ յառաջադիմութիւն է արել այստեղ էլ աշխատութեան բաժանումը և գործատարի լուծումը.

Յուստուս Մէօզէրը գանգատելով տում է թէ՝ հին բարի ժամանակին իւրաքանչիւր տուն դեռ իւր սեպհական ոստայնանկաց սեպհական (ձախարակ) (Vebstuhe) ունէր գոնէ իւր ժամանակին խծուծը (Spinnrocken) պակաս չէր. և տան թխած հացը և եփած կարկանդակը (Ruchen) ամենից համով էին. Այլ չի խոստովանիլ թէ՝ քաղաքներում էլ մի մեծ օգուտ այնտեղից էր, որ մարդիկ և մեքենայք տանից դուրս զանազան տեսակ գործեր են վերաբերում, որոնց մասին հարկաւ պիտի իւրաքանչիւր

digitised by A.R.A.R.@

տնային կառավարութիւն հոգալ, գործ դնելով շատ ժամանակ և զօրութիւն. Բայց ՚ի հարկէ շատ ափսոսալի է, որ այս ճանապարհով ընտանիքներում միշտ աւելի տարածուած է հեռանալը և այնպիսի պարտաւորութիւններից էլ փախչելը միտքը, որոնք ընտանիքներին մերձ են բնականաբար և գլխաւորապէս:

Վարժարանական զարգացումը միշտ կարողացել են գործ դնել միայն սակաւները. բայց աւելի բարձր վարժարանի համար միջոցները աւելի շուտ են հոգացւում: Դարերով կային գիմնազիաները և նրանց հետ էլ աղջկերանց միջակ վարժարանները. Կամաց կամաց կանայներին էլ երևեցաւ մի աւելի մեծ կրթութեան հարկաւորութիւն և հասարակական վարժարանների եղած յարաբերութիւնը էլ կարգին չթւեցաւ և կառուցւեցան պանսիոններ բարձր վարժարաններ որ կանանց էլ առաջուանից աւելի բարձրագոյն ժամանակի ընդհանրական կրթութեան աստիճանին վերայ: Այս անունը այս դարու քառաներորդ տարուց առաջ առաջ չէ գալի: Բարձր դասակարգերի (մեծատուններին) երեխայների համար, առաջնոյ եղած վարժատունները շատ պարզ ձեւ ունէին ուսանելու. և այն տեղ էլ տասն և չորս տարեկանից բարձրը շատ հազիւ էր գնում: Դուստրների աւելի կատարեալ կրթութեան այն ժամանակը զանազան կերպով հոգում էին էին հէնց ընտանիքում: Այս աւելի դժուարացաւ կանանց կրթութեան վրայ բարձրացած պահանջներով և սակաւ նախապատիւ երեւեցաւ բոլորովին վարժարանին և նրա կանոնաւորուած կարգադրութիւններին թողնել այս հոգացողութիւնը: Աղջկերանց վարժարանները ընդարձակեցին իրանց ուսման ձեւը և իրանց դասատուն կարգերը և անուանեցան պանսիոններ բարձր վարժարաններ:

Այս վարժարաններին ձեռնարկելը աւելի առաջ եղաւ, քանի թէ մարդ ու զգալէս մտածել կարողացան, թէ ինչ է այսպիսի վարժարանի սեպհականութիւնը և ինչ նրա զանազանութիւնը տղերանց բարձր վարժարանից: Շատ սուղ կարելի է ասել, թէ ինչ է գիմնազիումը, և ինչ պիտի լինի. բարձր դուստրների բարձր վարժարանի գաղափարին վրայ թագաւորում է դեռ շատ մթութիւն և որոշեալ կազմուած չ՚ունի: Աղջկերանց վարժարանի ամբողջ էութիւնը նման է մի այգու, որի մէջ մեծ հոգացողութեամբ կապած ածուների մօտ դեռ շատ վայրենի բուսած տեղեր էլ կան. այսպէս էլ է խոկապէս մի արհեստական կանոնաւորութի հակառակ ու զզուելի այս սահմանում յաճախ շատ բարեգործական պարզ բնականութեան:

Դուստրների բարձր վարժարանները կան և գտնւում են այն բոլորի ժամանակցութիւնը և ուշադրութիւնը, որոնց սրտումն է առաջ սերնդի բարօրութիւնը: Մարդ չպիտի կարծի, թէ ընկերութեան պարտաւորութիւնները և միւս կարգերի յարաբերութիւնները ճանաչելու համար աղջկերանց անհրաժեշտ հարկաւոր է այսպիսի վարժարան գնալ: Բայց մարդ պիտի խոստովանի թէ քանի որ մի երեխայի համար տնային դաստիարակութիւնը և զարգացումը օգտաւէտ է, միւսի համար շատ անգամ վարժարան գնալը այն նախապատուութիւնը ունի, որ առ հասարակ այսպիսի վարժարանները մա-

digitised by A.R.A.R.@

մանաւանդ այժմեան հանգամանքներին նայելով՝ անհրաժեշտ են դառել եւ շատ դէպքերում մի մեծ բարեգործութիւն են, որը էլ աւելի կը մեծանար, եթէ ծնողները կամենային վարժարանին աւելի օգնել և երախանց մասին առուքը միաբանական համարիլ, որը կարօտում է շատ նախապէս դէմ առ դէմ բացատրութեան։

Այժմ բանը կարող է միայն նորանում լինիլ, որ միշտ աւելի պարզ ըմբռնուի, սահմանուի և աւելի որոշ իրագործուի, ինչ որ անելու են և կարող են դպրոցների բարձր վարժարանները։ Այն ազգու միտքը և սէրը, որը Գերմանիայում մանկավարժութեան բոլոր խնդիրներին է տրուել, այս սահմանումն էլ անուրանալի է։ Այս տեղ քանի տարիներով եղած յառաջադիմութիւնները գանազան վարժարանների շրջաբերական յարաբերութիւններում՝ և գեղեցիկ փոյթութիւնները միւս գըրուածներում աչքի առաջի են, որոնցից միեւնոյն ժամանակ առաջնում է, թէ մարդ չը պիտի խառնուի դեռ եւս յաղթելի արգելքների և դըժուարութիւնների վրայ։ Ես ուզում եմ նրանցից մի քանիսը ցոյց տալ որոնք մասամբ դպրոցների բարձր վարժարանի էութեան մինչ որոշի զարգացման մէջ դեռ մի կողմ չեն որոշուիլ մասամբ պիտի նայուին ինչպէս վերաբուսեալ բաներ (Aussiuchse), որոնք մի քանի վարժարաններում գտնուում են առանց ամբողջ ձեւի արժանաւորութեանը վնաս տալու։

Իրական վատ դրութիւններին պատկանում է ամէնը, ինչ երկրորդների վարժարանների օրինակից չափից դուրս կախումին վերաբերում է։ Չեմ յապաղում շուտով այս տեղ հաշուելու երեխանց բազմաթիւ ամբոխումը, ինչպէս աղջկերանց շատ վարժարաններում և գաւառներում լինում է, կանանց բնութեան հակառակ է այս։ Տղերանց համար առանձին զարգացումը հազիւ անգամ է օգտաւէտ. նրանք պիտի միանգամ կարգ մտնեն և անդամ դառնան և պիտի վաղ սովորին ընկերութեան կանոնը ճանաչել և պահպանել։ Աղջկերանց շուտով վըշտալի (Verletzliche) հոգեկան բարութիւնը հեշտութեամբ, առանց վնասի չի դիմանալ մի այսպիսի օրական բազմամբոխ ժողովի։ Այնու ամենայնիւ ունենք այն միջակ կարգի բոլոր վարժարանների հետ միասին, որոնք իրանց ուսանելու ձեւումը և ժամանակին էլ կանանց յատկութեան պահանջած չափը պահպանում են, շատ վարժարաններ էլ չափից դուրս աշակերտուհիներով, չափից դուրս դասատուներով, չափից դուրս առարկաներով, և չափից դուրս ուսուցիչներով։

Շատ վարժարաններում աշակերտուհիների թուի անհամեմատ բազմանալը պատճառը նրանումն է, որ շատ ծնողներ, որոնց դպրոցների համար տարրական կամ միջակ վարժարանը լիապէս բաւական է, չիմանալով կամ սնափառապէս մեծ արժանաւորութիւն են տալիս. եթէ մի քանի ժամանակ իրանց երեխանց այն պատուին և օգտին են մասնակից անում, որին յոյս ունին դստերների բարձր վարժարանից, որով միայն երեխայքը կենցաղավարութեան մէջ շատ անգամ մոլորում են։ Երբեմն միեւնոյն հիմունքն է այսպիսի վարժարանների բազմանալում, որոնցով փոքր քաղաքների հասարակութիւնները չեն կամենում միւսներից յետ մնալ։

digitised by A.R.A.R.@

Կան փորձարաններ 400 . 500 . 600 . աշակերտուհիներով : Մայրի-քուրը քաղաքի դասատների բարձր փորձարանը 800ից աւելի ունի այժմ Պատրաստուած ուսուցիչները , ո-րոնք երեխաներն բարձրանալով մի-ջի տարիքին մինչև 6.8 10 են : Աշա-կերտուհիների թիւը հասնում է մօտ 50.60.70 են տարին և մէկին դասա-տուներում , և վերջիններումս էլ շատ անգամ 30.40 ից բարձր է գը-նում :

Մէջ մի եզրակացութիւն չէ կա-րաւում , թէ էլ կարելի լինի խօսել այնպէս մեծ փորձարաններում նա-խագիծալ բնաւանկանութեան վրայ և այնպէս բազմաթիւ դասատունե-րում անհատական (Individualiserende) դաստիարակութեան , որ այժմ եւրոպայից աւելի անհրաժեշտ է , քանի թէ այլե-րանց . յետոյ թէ խնկական զարգա-ցումը և նրա մասին՝ ամէն և փորձա-րանի միասին ներգործութիւնը այս-պիսի հանգամանքներով անչափ գըժ-ուարանում են , այո , շատ դէպքե-րում էլ անկարելի լինում : Նոյնպէս շատ անգամ խափանիչ են զարգացու-ցիչ ներգործութեան միութեանը այն խայր հետ միասին դասատու փոր-ձարանների յաճախ փոփոխումը և մեծ թիւը , որոնցից շատերը իւրա-քանչիւր փորձարանում միայն մի քա-նի ժամերով են զբաղուած :

Ինչ որ ուսանելու առարկաներին է վերաբերում , սակայն առ սակաւ-այնքան են շատացել դասատուների մի քանի բարձր փորձարաններում , որ որոնք կենտրոն կրական (բէալական) փորձարաններ են դառել : Մի քանի ցուցակներում 12 զանազան առար-կաներ են գրուած և իւրաքանչիւր դասատում շաբաթական մօտ 34 ժամ ուսանելու . Բարձրանալով այն առարկաներին են հասնում , որոնք առ հասարակ այժմերանց փորձարա-նի միւս կողմին են զանուում և ան-պատճառ առանձին զբաղման թող-նելու է : Տիեզերանց բարձր փորձարան-ները արդէն երկար ժամանակից հե-տէ չեն կարողացել իրանց պաշտպա-նել առարկաների շատութեանց : Այն տեղ փոքր բաւանում է փորձարան-ների զանազան տեսակներ՝ և այն հա-մանուագութեանք , որ ամեն տեղ թէ գի-մնազի-ա-ն և թէ կրական փորձարաններում աշակերտ անձնա-կան ջանասիրութեան վրայ է . այս պատճառով էլ պատահում է , որ այն-տեղ մի քանի բարձր դասատներում անդուրս միակողմանիութեամբ գըլ-խաւորապէս մի կամ բիչ բան են ու-նում , որպէս զի նրանով հարկաւոր բաները առաջ տանեն : Աղջիկները ի-րանց բնութեան համեմատ՝ բոլորո-վին ուրիշ յարաբերութիւն ունին դէպի առարկաները և անձերը : Տը-ղայն առաջ բանն է ուզում և նրան հետ էլ փորձարանին պատուում եթէ տեսնում է , որ նա իրան օգնում և բարին կամենում է : Աղջիկը շատ դէպ-քերում աւելի աշխատասէր է փոր-ձարանի , քանի թէ բանի համար , և բարձրանալ նա փորձարանին սիրում է , աշխատում է անխոնջ յառաջ նրա բաւականութեան վրայ : Համե-րի այս խիստ անձնաւոր լինելուն միանում է պարտաւորութեան մի եր-կիւղալի զգացմունք և պատւոյ մի ե-րանդուտ ցանկութիւն , որը ամենա-զգալի կերպով կը գրգռուի շատ ան-գամ գովասանքներով և պարսաւանք-ներով . նոյնպէս և այլերանց փորձա-րաններից փոխ առած այս կամ այն նախանձը չարժելով (Certiren) Լաւա-ներէն (Certare) և այլ միջոցներով :

Պետ. Լուրսամեան :



digitised by A.R.A.R.@